

ԲԱԾՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 20 ԹԻՒԻ ԽԱՄԱՐ		ԳՐԱԹԻՒՆԸ ԵՍ չԵՆ զՐԿՆԵՐ: ՆՈՒՄԱՐ ԳՐԱԹ ԵՍՅԵՆ զՐԿԵԼ ՏԵ- ՄԵԼԵՍՂ ՀԱՅԵԼԻՆ, Վ.Ս.ՐԶՈՒԹԻՒՆ «ԿԱՏԱԿ» Ի Վ.ՍԱՆՈ (ՊՈԼԿԱՐԻԱ):	
Վ.ՍԱՆՈ	ՓՐ. 1,50	ԿԱՏԱԿ	
Վ.ՍԱՆՈՅԵՆԻ ԳՐԱՐԱՆ	2		
ՎՐԱՄԱՍՏԱՆԻՆ	2,50		

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԴՇՍԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието

„ГАДАГ“

ВАРНА (България).

Հատար 7 1/2 Սանթիմ

Administration du journal

«GADAG»

VARNA, (Bulgarie).

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Քիժու կը խօսինք եղեր :

Մարդու ականջ տնեցողներու հետ է մեր խօսքը . անոնք՝ որ կոյր են ու չեն տեսներ կամ չեն ճանչնար , յանցանքը իրենց աչքերուն մէջ թող փնտռեն եւ մարդու ականջով մտիկ թող ընեն :

Գեղանի քաղաքի թղթակիցը այսպէս կը գրէ իր յուլիս 4 թիւ նամակով :

«Բարիդի հայոց մատրան մէջ կարգացուցաւ Ս. Օրմանեան Պատրիարքի մէկ շրջաբերական կոնդակը , Հայաստանի գրեթէ անթոթութենէ մեռնելու առաւել ճանին հասնող մերազնեից համար : Ամենէն սրաւուռչ կէտը որբերու խնդիրն էր , որոց թիւը 50,000ի (յիսուն հազար) կը հասնի , եւ որոց 30,000ը միայն ծանօթ եղած է ցարդ Պատրիարքարանի :

«Տեղւոյս հոգեւոր հովիւ Տէր Սուքիաս Պարոնեան յազուած ձայնով եւ արցունքոտ աչքերով կարդաց այս կոնդակը , ու ներկաներէն շատեր , մանաւանդ կիները , լացին իւր-իւր 50,000 որբերուն :

«Ո՞վ պիտի ըլլայ պատասխանատուն թէ անոնք կորսուին , ո՞չ ապաքէն մեր հարուստները . . . :

«Տեսնենք Բարիդ ի՞նչ դործունէութիւն

պիտի ցուցունէ այս ծանր պարագային հանդէպ . Բարձր, նուաբ բաշա, երամեան Գէորգ պէյ , Լեւոնյեան եւ Մարկոսեան Տիարք ինչե՞ր չեն կրնար ընել :

Գեղեցիկ քաղաքի նամակագիր յարգելի Պարոն Տ. Ալատինեան կրնայ իր արամաքանութիւնն ընդլայնել եւ Հայ հարուստներն պատասխանատու բռնել 50,000 որբերու պահպանման համար , որոց 20,000ը դեռ անծանօթ մնացած է եղեր Պատրիարքարանին . սակայն, մենք ալ իրաւունք չունինք արդեօք հարցնելու թէ՛ այդ 50,000 որբերը պատրաստող Հնչակ ու Դրօշակ պիտո՞ները , կեդրոնները , կամ իրենց ըսածներուն համաձայն կուսակցութեան գանձարանները , բնաւ պատասխանատու չե՞ն իրենց անխուհիմ ցոյցերէն ծնունդ առած 50,000 որբերու պահպանման : Ո՞ւր մնաց այդ որբերու ծնողքներէն շորթուած գումարներն : Ո՞ւր մնացին Մարտոսէն ըստ յայտարարութեան «Հնչակ» թերթի 1280 լիբա եւ ըստ ոմանց տեղեկատուութեան 3,000 կամ 7,000 օսմանեան դեղին ոսկիները : Ո՞ւր մնաց յանուն Զէյթունի գիւլաղուններուն հաւաքուած գրամներն . ո՞ւր մընացին Դաշնակցականաց արիւնքուայ եւ բէլօվէրահրաշ ռուպլիները , չորս ու կէս

րեվօլյուցիոնի բաժանմամբ և երկուք ու կես առաւի ուժանակի հեղուկով միթէ կարելի է հաշիւը փակել, կը հարցնենք, ո՞վ է Հայ ժողովուրդի այսքան թշուառութեան պատասխանատուն, ակնարկուած Հայ հարուստները՝ թէ չ'ակնարկուած յեղափոխական ազգասպան կօմիտէիները, կեղերոնները, պիւրօնները:

Վսեմ: Նուպար բաշայի 1878ի ազգօգուտ ծրագիրը մերժողներն այսօր պատասխանատու կ'ուզեն բռնել Նորին վսեմութիւնը կարգ մը կաւկասցի ու թրքացի անազգ ու անանուն *solidarists* նու պատրաստած ու պատրաստելիք որբերուն համար: Դեռ ասկէ քանի մը ամիս առաջ Ֆիլիպի մէջ կարծեցեալ յեղափոխականներուն լրբաբար նախատած ու մինչեւ անգամ դանակոծած էգնայեանէն օգնութիւն կ'սպասուի որբերուն համար և տակաւին կ'ըսուի թէ՛ կծու կը գրենք:

Նուպար բաշան յորդորի պէտք չունի, էգնայեան, Երամեան կամ Մարկոսեան գիտեն իրենց ազգասիրական պարտքը կատարել, քանի որ որբացեալք ու թըշուառացեալք՝ իրենց արեւակից եղբարց զաւակներն են, արկածին պատճառներն ո՞ր կողմէն ալ եկած ըլլան, պէտք է ու պարտականութիւն է դարձանել, եւ մենք պէտք է կոչուա՞նք ու դիմենք մարդասէրներու ողորմածութեանը ու դթութեանը:

Ըսած ենք և դարձեալ կ'ըսենք, մենք յեղափոխութենէ վազ չ'ենք կրնար անցնիլ, պէտք է շարունակենք, բայց ուղիղ դիմով, շրջահայեաց հեռատեսութեամբ և ամենաանձնանուէր դուժունէութեամբ:

Թուրքը մեզի բարեկամ չի կրնար ըլլալ ու ոչ ալ մեր հաւատարմութեանը կրնայ վստահիլ այլ ևս, ուստի պէտք է հաշիւով շարժինք մեզմէ շատ բարձր

կազմակերպութիւն ունեցող կոպիտ ու մոլեռանգ ուժին դէմ:

Մեր մեծ զէնքը պէտք է ըլլան մեր գաղտուկը, միացած կազմակերպութիւն, և ժամանակի հանգամանքներու լաւ գիտակցութիւնը:

Քննադատութենէ չը փախինք, այլ աշխատինք որ ուղղուինք ու անխոհեմաբար սխալ չը գործենք, հետեւաբար կը՝ ծու խօսելու և կծու ալ գրելու տեղէ չը տանք:

Յ. ՉԱՔԵՐԵԱՆ

Մ Ե Ր Շ Ո Ւ Ր Զ Ը

— 0 —

Ճշմարիտ քառս մ'է, ուր կը տապըլտըկինք այսօր թէ դաղափարի և թէ կացութեան կողմանէ: Եղած չէ, կամ գոնէ ես չ'եմ յիշեր ժամանակ մը, ուր անհասկացողութիւնը արդի համեմատութիւնն առած ըլլար մեր մէջ:

Սմեն ինչ քննադատութեան ենթարկուած, իսկապէս ոչինչ կը քննադատուի դեռ այնքան լուրջ, այնքան շրջահայեաց, որքան կը պահանջէ զմեզ շրջապատող հանգամանքներու ծանրութիւնը:

Մէկը կ'ելլէ կը պահանջէ անպայման կերպով յեղափոխական մարմիններու միութիւնը. բայց չը կրնար ցոյց տալ ճամբան, միջոցը, որով հնար ըլլար զայն իրագործելու և հարցը կը մնայ միշտ հարց օդին մէջ ցնդող անուշաբոյր խունկերու բաղդին միայն արժանանալով:

Միւսը կ'ելլէ ինչ ինչ պայմաններու տակ միութեան խնդիրը կը ջատագովէ, հակառակ պարագայի մէջ թուք ու մուր, կրակ ու բոց ցանելով դժկամակող դաւաճաններու դէմ:

Եւ ուրիշ մը կը քննադատէ այդ լեզուն աւելի ազտոտ լեզուով մը գոռհիկ ու անաղնիւ անուանելով ժողովուրդին այսօր

պէս թէ այնպէս զգայած ու բացատրած վշտին մէկ նմայչը :

Ինչո՞ւ այսպէս իրար չը հասկնալ. ինչո՞ւ հայհոյել և ինչո՞ւ այդ լեզուն քննադատած աստեղծիս իսկ հայհոյել :

Պատճառն այն է, որ ժողովուրդն հարստահարուած է, անօթի է, մերկ է և վերին աստիճանի յուսահատ : Պատճառքի մատնուած, ամենաճախող անալընկալի մ'առջև չը գիտեր ի՞նչ ընէ, ի՞նչ ըսէ : Ուստի յուզուած ծովու մը պէս կը փրփրի, կը մխայ, կը հայհոյէ և յոտից ցգլուխ կը ցնցուի հեռապատկերէն, որ այսօրուրէն իսկ կը պարզուի մեր առջև դժոխքէն աւելի սև և գերեզմանէն աւելի ախուր . . . : Իր թշուառութիւնն է, որ կ'ստեղծէ իրար չը հասկնալու այս խորխորատը, ուր կարծուածին պէս իր գործիչներու համար օրհնութեան պուրակներ չ'են պատրաստուիր, այլ անիծուց սոսկալի ուռմբեր, որ հաւատացէք թէ մօտ է պայթելու և մեծ աւերակներ գործելու . . . :

Կուգէ՞ք տեսնել այս ընդհանուր թըշուառութեան մէկ քանի մանր պատկերներն :

Մտիկ ըրէ՛ք :

Տիւնճէ

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ԽՈՒԼՆԵՐՈՒՆ

(Շարունակութիւն նախորդ թիւէն և վերջ)

Կարգ մը դօմիթէի կամ վարչութեան գործիք եղող անդամներ, կը քննադատեն, որ մենք անցեալ նամակով կծու լեզու գործածած ենք ժողովուրդը այս կործանման վիճակին բերող հասցողներուն դէմ : Մենք այդ լեզուն այդ բաները « յեղափոխական » անուանուած թերթերէն տրուեցանք. այդ բառեր և

աւելի ծանրեր կը հրամցունէին իրարու և ամեն անոնց, որոնք չէին համակերպեր իրենց : Մի՛ զայրանաք, պարոն ղեկավարներ, և քիչ մը պաղարիւնով մտածեցէք ու տեսէք թէ մեր վիճակ ո՞ր աստիճան վատթարացած է. ամենալաւ դիրք ունեցողներ այսօր անօթի ու բու պիկ սրճարաններու քիւիկ դարձան. ալ ամօթ է, բաւ է այսքան անխղճութիւն, բաւ է որ աղգն ամբողջ ձեր անմիաբանութեան ու « Ես » ին զո՞ւ տաք : Կապոյտ ակնոցներնիս մէկդի նետելով, աղգին իսկական վիճակը տեսանք և խոնարհինք ժողովուրդի ձայնին առջև, որոյ միակ պահանջն է ՄԻՈՒԹԻԻՆ ԾԱՆՈՒՅԵԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՏՍԱ՛ : Կը հասկնա՞ք :

Քարկացէք, այլ մի՛ մեղանչէք, լսեցէք մեր աղաղակը — Եթէ Սօւլթանին այսքան աղաչէինք, դուցէ ձեզմէ չուրկը լսէր — : Եթէ մէկ քանի գործիքներու պէս, ամենքնիդ ալ մեր 42ի ձայնը անհատական կը համարէք և ոչ ժողովրդական, չարաչար կը սխալուիք, ըսէք հրապարակաւ, որ ժողովուրդն առաջնակ հաղարներով ցոյց տայ ձեզ, թէ 42ի պահանջը ժողովուրդին պահանջն է, ժողովուրդին իղձն է, ժողովուրդին մէկ հատիկ իտեպն է և միթէ դուք ալ՝ պարոններ, անհատներ չէ՞ք որ ելեր էք աղգին ճակատագրին հետ կը խաղաք : Զգուշացէ՛ք :

Զգուշացէ՛ք Միութեան անուան տակ երրորդ կուսակցութիւն մը կազմելէ :

Միացէ՛ք կամ կործանուեցէ՛ք :

Գ. Յ. ԱՐՄԵՆԱԿ

ԼՈՒՄՈՒՄԵՆ ԹԻՒ Տ ՀԱՆՆԼՈՒՅԻ

— 0 —

Խաղի թուղթ, զոր լուծեց Գ. Արշակ Կ. Սէֆերեան :

ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏԻ

ԱՆԿԱՏԱԿ ՄԵԿ ՈՐՈՇՈՒՄԸ

«Սթանտարտ»-ի Կ. Պոլսոյ թղթակցէն

Եւրոպայի դիմադրելով ի՞նչ բանէ կրնամ վախնալ. վէց տէրութիւնք վաւստի և իւր 2000 արկածախնդիրներու հետ գլուխ չկրցին ելլալ. ի՞նչ կրնան ընել ուրեմն ընդդէմ 300,000 յաղթական բանակի մը, որ կը գտնուի ի Ռուսիայի մէջ. պահ մը ենթադրենք թէ՛ զինուորով թեամբ ուզեն գործել (Տէրութիւնք) ո՞վ իր վրան պիտի առնու գործադրութիւնը. ո՞վ պիտի վանէ թուրքերն թեւ սալիայէն. կը կրկնեմ, հոն եմ, հոն պիտի մնամ՝ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՍՆԱԻՐ ՀԵՌԱԳԻՐԻ ԿԱՏԱԿ Ի

Լոնտոն, 15 Յուլիս

Լրագիրները խօսք կուտան հայկական ինդիքը վերստին ձեռք առնուլ, Լօրտ Սալիզպուրին քանի մը տնդամբ բեմը հանել տալ, ծերունի կրտսերութեան բերանը բանալ տալ, պայմանաւ որ հայ յեղափոխականները բարեհաճին նոր որբերով օժտել իրենց ազգը:

Կ. Պոլիս, 15 Յուլիս

Թօրհանէի հաշտութեան ժողովին դէմ՝ կը գանգատին հոն եղող օսաձիկները, ըսելով որ դեսպանները երթալ գալով պարապ տեղը սանդուխները կը մնան շնչեն, աթոռները կը հինցնեն, աւելլու, սրբելու, մաքրելու գործ կը բանան, մեր առջև չեն խոնարհիր, մեզմէ չի վախնալու ձեւեր կ'ընեն, կուզեն որ մենք անոնցմէ վախնանք, չեն դիտեր որ, ան ժամանակները անցած է: Եթէ այս մարդիկը այսպէս երթալ գալը շարունակեն, անկասկած օր մ'ալ ծեծ պիտի ուտեն: Սալիզպուր օսաձիկներուն այս գանգաւոր իրաւացի գտնելով, հրաման ըրաւ որ, դեսպանները հոն չը հաւաքուին ալ ևս. ինքը իրենց վարպետներուն հետ կրխօրհեռագրաւ այս մասին: Դեսպանք ուժ-

գընապէս բողոքեցին այս վտարման դէմ, բայց աւա՛ղ, վտարումը՝ վտարում էր, և ալ կարող չեն թօրհանէի ֆեօշիկն առջեւէն իսկ անցնիլ:

Ժրնէվ, 16 Յուլիս

Տիեզերավարական աւագ պիւրօրն մէջ հայկական ինդիքը այս անգամ լրջօրէն նկատողութեան առնուելով, հառաատեցաւ որ, թէեւ առանց արեան ազատութիւն ձեռք չը բերուի, սակայն առանց փողի ալարիւնայեղութիւն չկրնար ըլլալ: Հայերը՝ ազատութեան համար կը մեռնին և չեն գանգաւոր, այս լաւ, սակայն մեռնելու համար ալ տակէ վերջը փող տալ չեն ուզեր, այս է գէշը, այս է յուսահատականը... և այս է որ յուսահատեցուցանում է պիւրջականներին

Գ.

ՄԻՈՒԹԻՒՆ

Անցան ժամեր, անցան օրեր,
ցոյցեր չափին հետեւանք.
Հայուն մնաց սուգ ու թախիծ
տառապանք ու հալածանք.
Որչափ այսպէս դանդաղ երթանք
մահը մօտ է մեզ համար,
թէեւ յօժար ենք մեռնելու
բայց պարագ մ'ունինք ի վճար:

Այս պարտք այն է՝ որ ուխտաւոր
երբ իրենց ուխտ կ'ընենք,
թէ կախաղան և թէ պատիժ
ամենայն ինչ յանձն առին,
Առաջ գացին ու ետեւէն
մենք չը գացինք քաջաբար,
Մեր պատմութիւն պիտի կնքէ
մեր գաղափարի այս վատթար:

Հերի՛ք, ե՛ղբարք, հերի՛ք կ'ըսեմ
բա՛ւ է մրնանք անտարբեր,
Բաւ թըշնամին քանդէ մեր տունը
և Լիէ մեր հէգ կոյսեր,
Այն որ Հայ է, պէտք է գիտնայ
որ՝ պարտք մ'ունի հայութեան,
Երբ ուրանայ հայը իր պարտք,
ալ ի՞նչ պէտք է Հայստան:

Թումազիկ

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.